“Հայկական ատոմային էլեկտրակայան” ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարագիրը հասարակությանը տեղեկություն տրամադրելու քաղաքականության վերաբերյալ

Ելնելով ՀՀ էներգետիկայի զարգացման ստրատեգիական պլաններից “ՀԱԷԿ” ՓԲԸ հիմնական և երկարաժամկետ նպատակը հասարակությանը տեղեկություն տրամադրելու ոլորտում հանդիսանում է կայուն և դրական հասարակական կարծիքի ձևավորումը խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման առավելությունների մասին: Հասարակության և զանգվածային լրատվական միջոցների մեջ դրական կարծիք կարող է ձևավորվել միայն բնակչությանը և այլ շահագրգիռ կողմերին օբյեկտիվ և ժամանակին ինֆորմացիա տրամադրելու արդյունքում:

Բարձրացնելու համար միջուկային տեղակայանքների շահագործման տնտեսական և սոցիալական նպատակահարմարության մասին իրազեկությունը և ձևավորելու համար վստահություն ՀԱԷԿ էկոլոգիական, ճառագայթումային և տեխնիկական անվտանգության նկատմամբ “ՀԱԷԿ” ՓԲԸ ղեկավարությունը հայտարարում է.

- իր կողմնակցության մասին այն քաղաքականությանը, որը ապահովում է ժամանակին և ամբողջական տեղեկության տրամադրում ՀԱԷԿ-ի աշխատանքի մասին,
- ՀՀ գործող օրենդրությանը խստորեն հետևելու մասին՝ բնակչությանը և այլ շահագրգիռ կողմերին տեղեկություն տրամադրելու վերաբերյալ իր գործունեությունը իրականացնելիս,
- “ՀԱԷԿ” ՓԲԸ տեղեկատվական կենտրոն ստեղծելու և դրա պատշաճ աշխատանքն ապահովելու մասին,
- հասարակությանը, հսկող պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին տեղեկություն տրամադրելու պարտականությունների հաստատման և “ՀԱԷԿ” ՓԲԸ պաշտոնական անձանց միջև բաշխման մասին;
- տեղեկության մատչելիության, բաց լինելու և հասարակության հետ կամավոր երկխոսության մասին,
- գիտաարդյունաբերական կազմակերպությունների հետ առաջավոր տեխնոլոգիաների և կիրառվող արդյունաբերական նորարարությունների վերաբերյալ տեղեկությունների ազատ փոխանակման մասին,
- ներկայացվող տեղեկության օպերատիվության, օբյեկտիվության և հուսալիության մասին,
- կարգավորվող մարմիններին ՀԱԷԿ աշխատանքի խախտումների վերաբերյալ ժամանակին և ամբողջական տեղեկություններ տրամադրելու մասին,
- մամլո, ռադիո և հեռուստահեռարձակման միջոցների օգնությամբ ՀԱԷԿ-ի անվտանգության վիճակի մասին հասարակությանը տեղեկություն տրամադրելու վերաբերյալ իր աջակցության մասին,
- արժանահավատ և բազմակողմանի տեղեկության հիման վրա “ՀԱԷԿ” ՓԲԸ դրական գործնական իմիջի ձևավորման անընդհատ ձգտման մասին,
- Հայաստանում միջուկային էներգետիկայի հետագա զարգացման ակտուալ հարցերում բնակչության տեղեկատվական ընդգրկումը ընդլայնելու մասին,

- ՀԱԷԿ-ը շահագործումից դուրս բերելու նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ հասարակությանը ժամանակին և պլանաչափ տեղեկություն տրամադրելու մասին:
  “ՀԱԷԿ” ՓԲԸ ղեկավարությունը ունեցած ողջ միջոցներով կհակազդի ՀԱԷԿ-ի մասին լուրերի և անստույգ տեղեկությունների տարածմանը և կաջակցի ՀՀ բնակչության վրա հոգեբանական ազդեցության նվազեցմանը՝ ՀԱԷԿ-ում վթարային և արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում: